ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ առարկայի
9-րդ դասարանի ավարտական քննական աշխատանքի ուղեցույց

1. ՔՆՆՎՈՂ ՆՅՈՒԹԻ ԲԱԺԻՆՆԵՐԸ

2011 թ. ավարտական քննության համար որպես հիմք և սկզբնաղբյուր են ընդունվում «Աշխարհագրություն» առարկայի ուսումնական ծրագիրը և դպրոցական դասագրքերը:

Հ/հ	Թ ե մ ա	Համամասնություն (%-ով)
1	Ընդհանուր տեղեկություններ Երկիր մոլորակի մասին, քարտեզագրության հիմունքներ	3
2	Աշխարհագրական թաղանթը և նրա ոլորտային կառուցվածքը	11
3	Մայրցամաքներ և օվկիանոսներ	14
4	Աշխարհի քաղաքական քարտեզը և բնակչությունը	5
5	Համաշխարհային տնտեսություն	9
6	Տարածաշրջաններ և երկրներ	29
7	Հայաստան	29
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը		100

2. ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ավարտական քննական աշխատանքը բաղկացած է 40 առաջադրանքներից:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ են 1-26-րդը: Այս առաջադրանքներից յուրաքանչյուրի համար տրված է պատասխանների 4-ական տարբերակ, որոնցից ճիշտ է միայն մեկը: Դրանցից յուրաքանչյուրին պատասխանելիս ընտրած պատասխանի համարը պետք է վերցնել շրջանակի մեջ, որից հետո «X» նշանով նշել պատասխանների ձևաթղթում:

Օրինակ՝ **7. Նշված երկրներից ո՞րն է գտնվում Եվրոպայում:**

1) Չինաստանը
2) Բրազիլիան
3) Ֆրանսիան
4) Ալժիրը



Օրինակ՝ **8. Ո՞ր շարքում է տրված մարզերի և մարզկենտրոնների ճիշտ համապատասխանությունը:**

1. Արագածոտն ա. Արտաշատ
2. Լոռի բ. Իջևան
3. Տավուշ գ. Աշտարակ
4. Արարատ դ. Վանաձոր

1) 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ
2) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա
3) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
4) 1- դ, 2-ա, 3-բ, 3-գ

Կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ են 27-36-րդը:
Այս առաջադրանքների բաց թողած տեղում՝ գծի վրա, պետք է գրել պատասխանը, որը կարող է լինել բառ, բառակապակցություն:
Օրինակ՝ **27. Լրացրեք բաց թողնված բառը:**
Երկրի խորքից դուրս ժայթքած մագման, որը կորցնում է ջրային գոլորշիներն ու գազերը կոչվում է _____:
Այս տիպի առաջադրանքների պատասխանները ևս պետք է անցկացնել պատասխանների ձևաթուղթ:

Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքներ են 37-40-րդը:
37-րդ և 38-րդ առաջադրանքների հիմնավորումը, **39-40-րդ** խնդիր-առաջադրանքներից յուրաքանչյուրի լուծման ողջ ընթացքը՝ քայլերի գրանցումով, հաշվարկներով, ապա ստացած պատասխանով՝ մանրամասն ու հիմնավորված, պետք է գրել առաջադրանքներից հետո բաց թողած տեղում: **Այս առաջադրանքների պատասխանները ձևաթուղթ չեն անցկացվում:**
Ձևաթղթում տրված է սխալ նշված պատասխանն ուղղելու 3 հնարավորություն, որից 2-ը՝ ընտրովի պատասխանով առաջադրանքներում, իսկ 1-ը՝ կարճում:

3. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ընտրովի, կարճ և ընդարձակ պատասխանով յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

Ըստ առաջադրանքների տիպերի միավորները բաշխվում են հետևյալ կերպ՝

1. **ընտրովի պատասխանով** առաջադրանքներ՝ 26 միավոր,
2. **կարճ պատասխանով** առաջադրանքներ՝ 10 միավոր,
3. **ընդարձակ պատասխանով** առաջադրանքներ՝ 4 միավոր: